Արձանագրություն 3

«ԳՀԾՁԲ-ՏՀԾ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 15 մարտի 2018թ.
Անցկացման ժամը՝ 15:00
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Անահիտ Ասատրյան
Արշակ Ասմարյան
Միհրան Համբարձումյան
Դավիթ Յուխանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գևորգ Խանոյան

Բացակայում էր հանձնաժողովի նախագահ Սոֆիա Գրիգորյանը:

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (14.03.2018թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցը՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

N 1 չափաբաժնի համար «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

3.1 «ԳՀԾՁԲ-ՏՀԾ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի անդամներ՝	Ա.Ասատրյան	_____ (ստորագրություն)
	Ա.Ասմարյան	_____ (ստորագրություն)
	Մ.Համբարձումյան	_____ (ստորագրություն)
	Դ.Յուխանյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	_____ (ստորագրություն)